ՊԱՅՄԱՆԱԳԻՐ 08

01.09.2009թ.

գ.Ծաղկահովիտ

ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտի գյուղապետարանը ի դեմս գյուղապետ վարձատու Ն. Հակոբյանի, մյուս կողմից վարձակալ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմը ի դեմս աշխատակազմի ղեկավար Ջ.Մարգարյանի կազմեցինք սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1.Ծաղկահովիտի գյուղապետարանը պարտավորվում է գյուղապետարանի վարչական շենքի 2-րդ հարկում «ՀՀ զբաղվածության պետական ծառայություն» գործակալության Ծաղկահովտի զբաղվածության տարածքային կենտրոնին հատկացնել 53.56 /հիսուներեք ամբողջ հիսունվեց հարյուրերրորդական/ քառակուսի մետր ընդհանուր մակերեսով 3 աշխատասենյակ, 10 տարի ժամկետով, իսկ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված ժամկետներում վճարել հատկացված աշխատատարածքի վարձը:

2. Պայմանագրի գինը և վճարման կարգը

2.1.Պայմանագրի 1.1. կետի համաձայն հատկացված աշխատատարածքի մեկ քառակուսի մետրի արժեքը մեկ ամսվա համար 140 դրամ է:Հատկացված 53.56 /հիսուներեք ամբողջ հիսունվեց հարյուրերրորդական/ քառակուսի մետր աշխատատարածքի համար տարեկան վարձը կազմում է 90000/իննսուն հազար/ դրամ:

Աշխատակազմը պարտավորվում է վարձավճարի գումարը վճարել ըստ եռամսյակների՝ Ծաղկահովիտի գանձապետական բաժանմունքի Ծաղկահովիտի գյուղապետարանի 900485060140 հաշվարկային հաշվին:

3.Կողմերի պարտավորությունները

3.1. Սույն պայմանագրով սահմանված պարտավորությունների չկատարման դեպքում Ծաղկահովիտի գյուղապետարանը վարձատուին զգուշացնում է, զգուշացումից 15 օր հետո գյուղապետարանը հայց է ներկայացնում դատարան՝ սահմանված կարգով տարածքի չվճարված վարձը բռնագանձելու և զբաղեցրած տարածքը հետ վերադարձնելու գյուղապետարանին:

4.Պայմանագրի գործողության ժամկետը

4.1. Սույն պայմանագիրը ուժի մեջ է 2009թ. սեպտեմբերի 1-ից մինչև 2019թ.օգոստոսի 31-ը:

4.2. Սույն պայմանագիրը կնքված է 4 օրինակից, որից 1-ական օրինակը պահվում է պայմանագիրը կնքող կողմերի մոտ:

ՃԱՂԿԱՀՈՎԻՏԻ ԳՅՈՒՂԱՊԵՏ՝ Ն. ՀԱԿՈԲՅԱՆ

ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Զ.ՄԱՐԳԱՐՅԱՆ

[illegible]

1:200

(чертёжный)

[illegible] [illegible]

H = 3,20 h = 3,00 D = 0,75; 0,45 d = 0,45; 0,20; 0,10

Инженерный БТИ

Очаковский филиал

Начальник [illegible] Е. Ежова



ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 5/1

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՃԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ

28.10.2009 թ. գ. Ճաղկահովիտ

Վարձակալական հիմունքներով աշխատատարածք հատկացնելու մասին:

Ընդառաջելով «ՀՀ Զբաղվածության պետական ծառայություն» գործակալության Ճաղկահովիտի զբաղվածության տարածքային կենտրոնի դիմումին, կենտրոնին աշխատատարածք հատկացնելու մասին:

ՃԱՂԿԱՀՈՎԻՏԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԸ

ՈՐՈՇԵՑ՝

Ճաղկահովիտ համայնքի վարչական շենքի 2-րդ հարկից 3 սենյակ թիվ 21, 23 և 34 53.56 ք.մ ընդհանուր մակերեսով 10 տարի ժամկետով մեկ քառակուսի մետրը ամսական 140 դրամ արժեքով տարեկան 90000 (հինգսուն հազար) դրամ վարձավճարով վարձակալական հիմունքներով հատկացնել Ճաղկահովիտի Զբաղվածության տարածային կենտրոնին:

ՃԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ Ն. ՀԱԿՈԲՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Լ. ՀԱԿՈԲՅԱՆ

Երկու հարյուր ինը թվականի նոյեմբերի երկուսին

Սույն պայմանագիրը վավերացված է իմ՝ ,,ՊՊՄՊԱՆ,, տարածքի նոտար ՍԻՐԵՆԱՆ ՌԱՖԻԻՆԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ կողմից: Կողմերը վարձակալության պայմանագիրը ստորագրեցին իմ ներկայությամբ: Պայմանագիրը ստորագրած ֆիզիկական անձանց ինքնությունը և գործունակությունը, ինչպես նաև իրավաբանական անձի իրավունակությունը, գործունակությունը, վերջինիս ներկայացուցչի լիազորությունները ստուգված են: ՀՀ քաղ. օրենսգրքի 611 հոդվածին համապատասխան, սույն պայմանագրի նպատակով իրավունքները ենթակա են պետական գրանցման ըստ գույքի գտնվելու վայրի անշարժ գույքի պետական կադաստրի տարածքային ստորաբաժանումում:

Գրանցված է սեղանամատյանում 1002

Գանձված է պետական տուրք և ծառայության վճար համաձայն ՀՀ ,,Պետական տուրքի մասին,, ,,Նոտարիատի մասին,, օրենքների:

ՆՈՏԱՐ ---------- Ս.Ֆ.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ